

## Աշխատանքային հանդիպում «Հեյֆեր Ինտերնեյշնլ Արմենիա» ծրագրի ղեկավարության հետ

13.08.2014



2014 թվականի օգոստոսի 13-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանն աշխատանքային հանդիպում ունեցավ «Հեյֆեր Ինտերնեյշնլ» (Heifer International Armenia) ծրագրի հայաստանյան մասնաճյուղի ղեկավարության հետ: «Հեյֆեր Ինտերնեյշնլ»-ը 1999թ-ից Հայաստանում գործող գյուղական համայնքների զարգացման ծրագիր է, որի առաքելությունն է աջակցել փոքր գյուղացիական տնտեսություններին, ֆերմաներին՝ գյուղական համայնքներում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման գործընթացներում, տնտեսապես արդյունավետ կառավարման հասնելու ուղղությամբ: Մասնավորապես, ծրագրի տնօրեն Անահիտ Ղազանջյանի հետ քննարկվեցին մարզում ս.թ. հոկտեմբերի 1-ից 5-ը անցկացվելիք, արդեն ավանդական դարձած «Արենի գինու փառատոնի» միջոցառումները, դրանց շրջանակներում գյուղական համայնքներում և համայնքային տնտեսություններում իրականացվելիք աշխատանքները, դրանց հնարավոր աջակցության հարցերը: Խոսվեց փառատոնի միասնական բրենդի ստեղծման աշխատանքներում «Հեյֆեր Ինտերնեյշնլ» ծրագրի հնարավոր աջակցության մասին: Մարզպետը նշեց այդ աշխատանքներում մասնագիտական և համալիր մոտեցման կարևորությունը, որը հնարավորություն կտա ապագայում խորհրդանիշի լայն և ընդգրկուն կիրառություն ապահովել, դարձնելով փառատոնը ճանաչելի և ընկալելի ոչ միայն հայաստանյան, այլև միջազգային հանրության և շահագրգիռ կազմակերպությունների համար, ապահովելով մասնակցություն նաև այլ երկրների գինեգործների և գինու արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների համար:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաև ՀՀ Վայոց ձորի մարզում ռեգիոնալ տուրիզմի զարգացման ուղղություններին և հեռանկարներին: Մարզի զբոսաշրջության զարգացման համատեքստում կարևորվեց ժամանակակից և հարմարավետ ենթակառուցվածքների, գյուղական համայնքներում մասնավոր հյուրատների, ինչպես նաև սպասարկման համապատասխան որակ ունենալու անհրաժեշտությունը: Զննարկմանը ներկա էր մարզպետի խորհրդական Սերոբ Անտինյանը: